# Պատրա՞ստ է Ադրբեջանը նոր պատերազմի

*Քոչարյան-Ալիեւ հերթական հանդիպումից առաջ եւ հատկապես դրանից հետո Բաքվում սաստկացած ռազմաշունչ եւ հոխորտալից հայտարարություններն ասես «առատության եղջյուրից» սկսեցին հորդել թե՛ Նախագահ Ալիեւի եւ թե՛ ընդդիմադիր քաղաքական գործիչների շուրթերից: Իրավացիորեն հարց է ծագում, արդյոք Ադրբեջանն ի զորո՞ւ է սկսել եւ «փառքով» ավարտել իր երեւակայական հաղթարշավը, թե՞ այս անգամ էլ կստանա արժանի հակահարված՝ իր ժողովրդին բերելով մարդկային, նյութական, բարոյական ու տարածքային նոր կորուստներ: Փորձենք պատասխան տալ այդ հարցերին՝ վերլուծելով ղարաբաղյան հակամարտության արդյունքում Ադրբեջանում ձեւավորված ներքաղաքական, տնտեսական, ռազմական եւ արտաքին քաղաքական պայմանները:*

## Ներքաղաքական առումով

Գաղտնիք չէ, որ հետխորհրդային Ադրբեջանում մի քանի իշխանափոխությունները, ուղղակի կամ անուղղակի կախված էին ղարաբաղյան խնդրի, ավելի ստույգ ղարաբաղյան ռազմաճակատներում տեղի ունեցած զարգացումներից: Մութալիբովի, Էլչիբեյի իշխանազրկումները հետեւանք էին հայկական ուժերի ռազմական հաղթանակների:

1994 թվականի բիշքեկյան հրադադարից հետո ընկած ժամանակահատվածը օբյեկտիվորեն կարելի է համարել ղարաբաղյան հակամարտության «ժամանակավոր սառեցման» փուլ, որը ձեռնտու էր Ադրբեջանի նախագահին, քանզի նախ նրան հնարավորություն կտար ամրապնդել իր դիրքերը երկրի ներսում, օգտվել նավթային դրամաշնորհներից եւ վերջապես Բաքու-Ջեյհան նավթամուղի գործարկմամբ՝ տնտեսական լծակների օգտագործմամբ ուժեղացնել ճնշումը Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների վրա, մյուս կողմից՝ միջազգայնացնելով հակամարտությունը, Հայաստանի Հանրապետությանը ներկայացնել որպես ագրեսորի եւ իր կողմը թեքել միջազգային հանրության կարծիքը՝ դրա ձեւավորման օգտին ծառայեցնելով նավթային հաղթաթուղթը:

Առանձնապես մեծ ժամանակ չպահանջվեց, որ պաշտոնական Բաքուն հասկանա, որ ժամանակն իր օգտին չի աշխատում: Օրեցօր ավելի մշուշոտ դարձող Բաքու-Ջեյհան նավթամուղի իրագործման պարագան մի կողմից, մյուս կողմից մոտալուտ իշխանափոխության անկանխատեսելի հեռանկարը գալիս են փաստելու ադրբեջանական կողմի համար մի դառը տեսանելի ապագա. Ղարաբաղը «կորսվում է» անվերադարձ: Մնում է միակ միջոցը՝ պատերազմը: Կարծես թե այս հարցում որոշակի համաձայնություն է նկատվում իշխանությունների եւ ընդդիմության միջեւ: Սակայն այս «պատերազմական փոխըմբռնումն» արտաքուստ է միայն: Իրականում թե՛ Ադրբեջանի կառավարողները եւ թե՛ ընդդիմությունը ղարաբաղյան խաղաքարտը փորձում են օգտագործել սեփական քաղաքական նպատակներին հասնելու համար: Բաքվի իշխանությունները լավ հասկանում են, որ առաջին իսկ լուրջ անհաջողությունից հետո երկիրը կանգնելու է այս անգամ ոչ թե համեմատաբար անարյուն հեղաշրջման վտանգի, այլ ուղղակիորեն կարող է ներքաշվել քաղաքացիական պատերազմի բովի մեջ, որտեղ բարիկադների մի կողմում ժողովուրդն է լինելու, իսկ մյուս կողմում նրան ընդդիմանալու է ռազմաոստիկանական մեքենան իր ամբողջ հզորությամբ: Ի հավելումն դրան կակտիվանան նաեւ լեզգիական եւ թալիշական ազգային շարժումները, որոնք լրացուցիչ մարտահրավեր կդառնան Բաքվի իշխանավորների համար՝ պահանջելով հավելյալ ուժեր եւ միջոցներ դրանք ճնշելու համար:

Մյուս կարեւոր գործոնը Ադրբեջանի ծայրագավառներում իսլամական արմատական տրամադրությունների ուժգնացման հնարավորությունն է, որի մասին իր հոդվածներից մեկում ակնարկում է Լեյլա Յունուսովան (տես «Նեզավիսիմայա գազետա», 24 փետրվարի): Ճիշտ է, մասնագետներից շատերը թերահավատորեն են մոտենում դեպքերի նման զարգացման հնարավորությանը, սակայն գործազրկության համատարած ալիքը եւ բնակչության խիստ բեւեռացվածությունն ու մեծագույն մասի աղքատացումը, դրա հետեւանքով մասսայական դարձած ներքին եւ արտաքին տեղաշարժը չեն բացառում նման սցենարի հնարավորությունն առաջին հերթին փախստականների շրջանում:

Այսպիսով՝ ներքաղաքական զարգացումների տեսանկյունից նոր պատերազմը հազիվ թե ձեռնտու է տիրող քաղաքական ընտրախավի համար: Սակայն պետք է մատնանշել, որ եթե 90-ականների առաջին կեսերին Ադրբեջանում հեղաշրջումների արդյունքում գրանցված իշխանափոխությունները պայմանավորված էին ղարաբաղյան պատերազմով, Ալիեւի եւ նրա կլանի հեռացումը քաղաքական ասպարեզից կմեծացնի նոր պատերազմի վերսկսման հնարավորությունը, քանզի նոր ուժերը իշխանության կգան առաջին հերթին Ղարաբաղը «վերագրավելու» կարգախոսով:

## Տնտեսական առումով

Ցանկացած պատերազմ պահանջում է հսկայական ծախսեր: Այս տեսանկյունից ոչ Հայաստանը, ոչ էլ Ադրբեջանը պատրաստ չեն երկարատեւ հյուծիչ պատերազմական գործողությունների: Ադրբեջանի պարագայում նոր պատերազմ վարելու հնարավորությունը կախված է լինելու երկրի հետագա տնտեսական զարգացման, մասնավորապես նավթի արտահանումից խոշոր օգուտներ ստանալու հնարավորությունից: Երկրի նավթարդյունաբերության ոլորտում ներդրվել են հսկայական միջոցներ դրանք վերակազմավորելու եւ վերագործարկելու համար, եւ այս ներդրումային նախագծերում ընդգրկված արեւմտյան նավթային ընկերությունները առաջինը կլքեն Ադրբեջանը, հուսախաբ անելով Բաքվին՝ Ադրբեջանը «երկրորդ Քուվեյթ» դարձնելու առանց այն էլ խիստ կասկածելի ծրագրում: Պատերազմի ընթացքում հաղորդակցական որոշ ուղղությունների սահմանափակման կամ դադարեցման դեպքում Ադրբեջանը կրկին կախվածության մեջ կընկնի Ռուսաստանի հետ կապող երկաթուղային եւ ավտոճանապարհային հյուսիսային երթուղիներից, որոնք կարող են խստացվել ռուսական կողմից՝ չեչենական ուժերի ակտիվացման դեպքում:

Այսօր Ադրբեջանի Հանրապետության բյուջետային ծախսերի մոտ 75 տոկոսը ապահովվում է նավթից եւ նավթամթերքներից ստացվող միջոցների հաշվին: 2000 թվականի տվյալներով Ադրբեջանը ներքին համախառն արդյունքի ծավալով ԱՊՀ երկրների շարքում առաջինն էր՝ 111,4 տոկոս (Հայաստանինը՝ 106 տոկոս): Արդյունաբերական եւ գյուղատնտեսական աճի ծավալով նույնպես Ադրբեջանը գրավել է առաջատար դիրքեր: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նոր պատերազմի վերսկսումը մահացու հարվածի տակ կարող է դնել երկրի տնտեսությունում գրանցված աճի տեմպերը, էլ ավելի սրելով սոցիալական ապահովության ոլորտում առկա իրավիճակը: Ավելին, դեպքերի նման զարգացման դեպքում չի բացառվում Բաքու-Սուփսա նավթամուղի աշխատանքների դադարեցումը (անվտանգության տեսանկյունից ելնելով, խափանումներ եւ այլն), որը եւ վերջնականապես կթաղի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարության ծրագիրը:

## Բարոյահոգեբանական առումով

Նոր պատերազմական գործողություններ սկսելու ջատագովները, ինչ խոսք, արտահայտում են այսօրվա ադրբեջանական հասարակության լայն շրջաններում տիրող իշխանական համակարգից եւ ստեղծված սոցիալ-տնտեսական դժվարությունների պատճառով հուսախաբ եղածների հոգեվիճակը՝ դրա ելքերից մեկը համարելով «կորցրած» տարածքների վերագրավումը: Այլ խոսքով, խաղում են ժողովրդի ազգայնական զգացումների եւ հայրենասիրական հետ: Մյուս կողմից՝ պաշտոնական Բաքուն «երկաթով եւ արյունով» գործելու իր նպատակադրության մասին հայտնելով, ակնհայտորեն փորձում է մեկ կրակոցով երկու նապաստակ սպանել. նախ, փորձելով շեղել բնակչության ուշադրությունը երկրի հրատապ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական խնդիրներից, մյուս կողմից, հնարավոր պատերազմի սկսման դեպքում «ազնվորեն» զգուշացնելով, որ նման խնդիրները կրելու են էլ ավելի սուր բնույթ:

Պարտվածի հոգեբանությունն առաջին հերթին մղում է ռեւանշի: Սակայն մի դրվագ վերջին զարգացումներից գալիս է փաստելու, որ նոր պատերազմը, որքան էլ փորձեն հայրենական կոչել, լայն ընդունելություն չի գտնի ադրբեջանական հասարակության կողմից: Ղարաբաղյան պատերազմում ադրբեջանցի հաշմանդամների նկատմամբ իշխանությունների գործադրած դաժան ճնշումների համալիր կիրառումը կարելի է համարել «նոր պատերազմի» առաջին տանուլ տված ճակատամարտը: Իշխանությունների այս «հերոս» հաղթանակը գալիս է վկայելու, որ ապագայում նման բախտի կարող են արժանանալ նրանք, ովքեր կրկին կճաշակեն պարտության դառը հաբը:

Բարոյահոգեբանական տեսանկյունից առավելությունն, անշուշտ, հայկական ուժերի կողմն է, նույնիսկ եթե պատերազմական գործողությունների սկզբնական փուլում երկու կողմերից լինեն կորուստներ (տարածքների, զինուժի եւ տեխնիկայի եւ այլն), ապա դա կանդրադառնա հայկական ուժերի բարոյահոգեբանական ընդհանուր վիճակի վրա շատ ավելի թույլ, քան ադրբեջանական կողմի վրա: Վիճակն էլ ավելի բարդ, կարելի է ասել խուճապային կդառնա հայկական ուժերի ճնշման տակ ադրբեջանական նոր տարածքների զիջման եւ դրան հետեւած փախստականների նոր հոսքի առաջացման հետեւանքով:

## Ռազմական եւ ռազմաքաղաքական առումով

Ցանկացած լայնածավալ հարձակողական պատերազմ անխուսափելիորեն հանգեցնելու է զինուժի եւ տեխնիկայի հսկայական կորուստների, նամանավանդ երբ հակառակորդ կողմն ունի ամուր եւ հուսալի պաշտպանական դիրքեր եւ հակահարված տալու պատշաճ հնարավորություններ: Այսօր Ադրբեջանն իր տրամադրության տակ եղած զինուժի, տեխնիկայի եւ մյուս ռեսուրսների տեսանկյունից, ինչ խոսք, որոշակի առավելություն ունի: Սակայն անցյալ պատերազմի դասերը հուշում են, որ դա բավական չէ պատերազմը շահելու համար: Արցախյան պատերազմի ամբողջ ընթացքում, ունենալով մարդուժի, զինտեխնիկայի, հատկապես օդուժի զգալի առավելություն, ադրբեջանական կողմը բացի խաղաղ բնակավայրերի ռմբակոծումից չկարողացավ էական բեկում մտցնել պատերազմի մեջ (չհաշված 1992 թվականի ամռանը ձեռնարկած լայնածավալ հարձակումը) եւ ի վերջո տանուլ տվեց:

Ադրբեջանական բանակն այս անգամ ստիպված է լինելու հարձակվել հզոր պաշտպանական դիրքերում ամրացած հայկական ուժերի վրա եւ ճակատային լայնածավալ հարձակման դեպքում, նամանավանդ երբ պաշտպանական գծերի մեծ մասն ականապատված է, պատերազմական բոլոր օրենքներով տալու է մարդկային եւ տեխնիկայի ծանր կորուստներ: Ադրբեջանի այսօրվա ռազմական կարողություններն այնպիսին են, որ այդ կորուստները կրելուց հետո հնարավոր չի լինի հետագայում զարգացնել որեւէ, թեկուզեւ չնչին հաջողություն: Իսկ, եթե ադրբեջանական ուժերին հաջողվի զբաղեցնել նախկինում կորցրած որեւէ բնակավայր, ապա դժվար է կարծել, թե այստեղ կվերադառնան նախկին բնակիչները եւ կվերականգնեն իրենց բնակավայրերը, քանզի դրանք հայկական հրետանու հասանելիության սահմաններում գտնվելուց բացի, վերստին կորցնելու վտանգի տակ կլինեն:

Երկրորդ, նոր պատերազմը շատ նմանություններ կունենա առաջինի հետ: Նոր ռազմարշավի նախաձեռնման դեպքում ադրբեջանական բանակը բախվելու է կազմակերպված եւ արդեն կայացման փուլն անցած Արցախի՝ իր մարտունակությամբ հակառակորդին որոշակիորեն գերազանցող բանակի հետ, որին կաջակցեն նաեւ ՀՀ զինված ուժերը: Մեկ այլ, շատ կարեւոր հանգամանք եւս: Եթե նախկինում Բաքուն ամեն կերպ ջանում էր կոծկել իր կորուստների իրական չափերը, ապա այսօր կապի ժամանակակից միջոցների կիրառմամբ (բջջային հեռախոս, ինտերնետ) հնարավոր կլինի մասսայականացնել գերի ընկածների եւ սպանվածների անուններն ու այլ տվյալները, եւ դժվար չէ կռահել թե դրանք ինչ արձագանք կունենան ադրբեջանական հասարակության շրջանում:

## Թուրքիայի դիրքորոշումը

Անկասկած այս ընթացքում Ադրբեջանը փորձելու է ապավինել Թուրքիայի աջակցությանը: Սակայն ի զորո՞ւ է Անկարան ռազմական օգնություն ցուցաբերել իր «կրտսեր եղբորը», թե՞ կրկին հուսախաբ կանի Բաքվին: Չմոռանանք, որ 1992 թվականի մայիսին, Թուրքիայի այն ժամանակվա նախագահ Թուրգութ Օզալի «հայերին մի փոքր վախեցնելու» ցանկությանն ի պատասխան, Մոսկվայից հետեւեց մարշալ Շապոշնիկովի ազդու զգուշացումը՝ թուրքական ներխուժման դեպքում երրորդ համաշխարհային պատերազմի սկսման վտանգի մասին: Այն ժամանակ Թուրքիան ընկրկեց, սակայն չդադարեց ռազմական օգնություն ցույց տալ Ադրբեջանին՝ տրամադրելով զենք եւ զինուժ: Այդ ընթացքում Հայաստանն արդեն ստորագրել էր մայիսի 15-ի տաշքենդյան Կոլեկտիվ անվտանգության պայմանագիրը, իսկ այժմ գոյություն ունի նաեւ 1997 թվականի օգոստոսին ստորագրված ռուս-հայկական ռազմավարական համագործակցության մասին պայմանագիրը: Անկարան այս անգամ էլ ի վիճակի կլինի միայն սուր ճոճել: Ճիշտ է, երկրի ներսում քրդական ընդվզումները համեմատաբար նվազել են, սակայն Բալկաններում եւ Մերձավոր Արեւելքում կրկին ակտիվացած հակամարտությունները լրացուցիչ անհանգստություն են պատճառում Թուրքիային: Բացի այդ զգացնել են տալիս երկրի տնտեսության քրոնիկ դարձած ճգնաժամերը եւ ցանկացած ջղաձգում Անկարայի կողմից միայն կարելի է համարել որպես բարոյահոգեբանական աջակցություն Ադրբեջանին եւ ոչ ավելին: Նեոօսմանիզմի ջատագովները՝ իրենց վերագրելով կիպրոսյան սցենարի կիրառումը ղարաբաղյան հակամարտության պարագայում, առաջ են քաշում ոչ թե անմիջականորեն Հայաստանի վրա հարձակվելու, այլ ուղղակիորեն ԼՂՀ տարածք ներխուժելու իրենց նպատակադրությունը: Սակայն այս ավելորդ ճոռոմաբանության հետեւում թաքնված են թուրքական սահմանափակ հնարավորությունները: Նատոյական կապանքներով շղթայված լինելու հանգամանքը միայն բավական է զսպելու տարածաշրջանային տերության իր դերակատարությունն ապացուցելու թուրքական ախորժակը, անգամ այն դեպքում, երբ Նախիջեւանի կողմից ադրբեջանական հարձակմանն ի պատասխան հայկական ուժերը մասնակի կամ լրիվ կռազմակալեն այս շրջանը եւս:

Այսօր աշխարհում ուժերի նոր հաշվեկշիռ է հաստատվել: Հետխորհրդային առաջին տարիների «շիլաշփոթը» մնացել է անցյալում: Ուստի թուրքական վտանգի առկայությունը խիստ չափազանցված է թվում այսօր: Անկարայում ուշացումով են սկսել գիտակցել, որ իրենք որոշ չափով դարձել են Հայաստանի հանդեպ իրենց նախնական դիրքորոշման գերին: Երեւանի նկատմամբ միակողմանի նախապայմանների առաջադրումը եւ Ադրբեջանի հետ բոլոր հարցերում եղբայրական համերաշխության դրսեւորումները վերջին տասը տարիների ընթացքում թուրքական արտաքին քաղաքականության լուրջ անհաջողությունների պատճառ հանդիսացան: Նախ թուրքական քարոզչական մեքենան լուրջ անհաջողություններ կրեց «Ադրիատիկից մինչեւ չինական պարիսպ ձգվող թուրքական միություն» ստեղծելու ճանապարհին՝ Ադրբեջանի ռազմական պարտության հետ մեկտեղ: Չունենալով նախկին ԽՍՀՄ թուրքալեզու հանրապետությունների հետ անմիջական ցամաքային կապ՝ Թուրքիան կախվածության մեջ հայտնվեց Հայաստանի տարածքով անցնող տարանցիկ ճանապարհներից Իրանի եւ Ռուսաստանի ազդեցության տարածմանը այս շրջաններում հակազդելու համար, սակայն Անկարան նախընտրեց Հայաստանի նկատմամբ սպառնալիքների ու նախազգուշացումների գիծը, դրանով մեծապես պայմանավորելով իր անհաջողությունները «թուրքական քաղաքականության» ոլորտում:

Պետք է միայն հուսալ, որ նախքան հերթական ռազմական արկածախնդրությունը ձեռնարկելը Բաքուն կփորձի վերլուծել դրա բոլոր բացասական հետեւանքները, իսկ ադրբեջանական հասարակության առողջ ուժերը կջանան հետ պահել երկիրն անհարկի ու անիմաստ կորուստներից, քանզի կլաուզեւիցյան հայտնի «պատերազմը քաղաքականության շարունակումն է այլ միջոցներով» դրույթի որդեգրումը կործանարար կլինի առաջին հերթին հենց Ադրբեջանի եւ ադրբեջանական ժողովրդի համար:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ

